գնաց իւր գաւառը եւ սկսեց կառավարել, ուղարկելով իւր օգնականներին երկրի բոլոր կողմերը։

Հայերի յարձակումն Իւսուփ ի. Մուհամմեդի վերայ։

Հայերի յարձակման պատճառը հետեւեալն էր։ Երբ Իւսուփ գնաց Հայաստան իւր գաւառը, Նորա մօտ եկաւ Բագրատ ի. Աշոտ, որ իշխանաց իշխան կը կոչուէր, եւ խնդրեց Նորան՝ հաստատել Նորան իշխանութեան մէջ. բայց Իւսուփ ձերբակալեց Նորան եւ կապանքների մէջ ուղարկեց ամիրապետի դուռը, ուր Բագրատ իւր որդու հետ ընդունեց իսլամութիւն։ Այն ժամանակ Բագրատ ի. Աշոտի եղբօր որդին եւ հայ իշխանք դաշն կապեցին Իւսուփի դէմ։

Ձիւն իջաւ եւ ծածկեց Տարօն քաղաքը, ուր կը գտանուէր Իւսուփ. երբ ձիւնը դադարեց, Հայերը բոլոր կողմերից եկան եւ պաշարեցին Իւսուփին եւ Նորա մարդիկը քաղաքում. Իւսուփ գնաց քաղաքի դուռը եւ այնտեղ տեղի ունեցած կռուում սպանեցաւ իւր բոլոր ռազմիկներով հանդերձ։ Նորան, ով կռուին չէր մասնակցում, Հայերը ասում էին՝. «Հանիր զգեստերդ եւ ապրիր մերկ»։ Շատերը Նոցանից հանեցին իրանց զգեստները եւ ապրեցան մերկ եւ բոբիկ, ոմանք մեռան ցրտից, ոմանց մատները ընկան, եւ ապրեցան։

Երբ Իւսուփ ուղարկեց Բագրատ ի. Աշոտին, հայ իշխանք դաշն կապեցին եւ երդուեցան արեամբ՝ սպանել Իւսուփին. Նոցա հետ համաձայնեցաւ եւ Մուսայ ի. Զուրար, որ ամուսնացած էր Բագրատի դստեր հետ։ Իսկ Սաւադ ի. Աբդուլհամիդ Զահհաքին հակառակ էր, որ Իւսուփ ի. Աբու Սայիդ այնտեղ մնայ եւ խմացրեց Նորան իշխաններից Նորան հաստատ լուրերի մասին. սակայն Իւսուփ չանսաց։ Ռամազան ամսին եկան Հայերը եւ